Հաշվետվություն
2025 թվականի ապրիլի 14-ից 29-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**
   Ռիմա Գյուլզատյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Պեկին), 2025թ. ապրիլի 14-ից 29-ը:

4. **Հրավիրող կողմը**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Առևտրի նախարարության Միջազգային Բիզնեսի Պաշտոնյաների Ակադեմիա (AIBO):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցել «Զարգացող երկրների համար նախատեսված թափոնների վերամշակման ծրագրերի մշակում» խորագրով դասընթացին:

6. **Քննարկված թեմաները**

Դասընթացի մեկնարկը տրվեց Չինաստանի ազգային պատմության և մշակույթային կյանքի ակնարկով: Այցի ընթացքում քննարկվել են թափոնների կառավարման մի շարք խնդիրներ, այդ թվում՝ սկզբնաղբյուրից թափոնների տեսակավորված հավաքման և/կամ երկրորդային տեսակավորման, վերամշակման և վերջիններս խթանելու համար արտադրողի ընդլայնված պատասխանատվության ու դեպոզիտի համակարգերի ներդրման դժվարություններն ու առավելությունները, այդ ուղղությամբ օրենսդրական կարգավորումները, իրավաբանական անձանցից թափոնների առանձին տեսակների հավաքման և գործածության արդյունավետությունը, թափոնների այրման, օրգանական թափոնների գործածության՝ հիմնականում կենսագազի ստացման, աղբավայրերի շահագործման խնդիրները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Այցի ընթացքում հանդիպում է անցկացվել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրի և արդյունաբերության նախարարության միջազգային բիզնեսի պաշտոնյաների և նախարարության ներկայացուցիչների հետ:

Հանդիպումները տեղի են ունեցել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մայրաքաղաք Պեկինում, Սուժոու և Դոնշան քաղաքներում և հարակից բնակավայրերում: Հանդիպումներ են եղել թափոնների կառավարման ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների ներկայացուցիչների, արդյունաբերական այգիների ղեկավարների, շրջակա միջավայրի նորարարությունների հետազոտական ինստիտուտների մասնագետների, գյուղատնտեսական և գյուղական թափոնների ռեսուրսների օգտագործման կառավարման տեխնոլոգիաների և ինժեներների հետ:

Ներկա գտնվեցինք Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության ցերեկույթին, որը հսկայական ենթակառուցվածքային նախագիծ է: Պեկինի թափոնների այրման ձեռնարկությունում ծանոթացանք թափոնների այրման էներգիայի արտադրության տեխնոլոգիային և արդյունաբերությանը: Սուժոու քաղաքում այցելեցինք Սուժոուի արդյունաբերական պարկի ցուցահանդես-սրահի բացմանը (Industrial park planning exhibition hall), այնուհետև այցելեցինք նորարարության վրա հիմնված Վանգշա ձեռնարկություն (Wangshan interprise):

Ուսումնական շրջագայության շրջանակներում այցելեցինք չինական Մեծ պատ, ինչպես նաև նորարարության վրա հիմնված մի քանի ձեռնարկություններ (Beijing Environment Sanitation Engineering Group Co., Ltd.), հետազոտական ինստիտուտներ, ազգային պարկեր, աղբի վերամշակման գործարաններ (The rural revitalization situation in Shuangwan village, Dongshan town):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել քննարկել վերը նշված կազմակերպությունների հետ հետագա համագործակցության կարիքները և հնարավորությունները:

Ընդունված որոշումներ և ստորագրված փաստաթղթեր չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է աշխատանքներ տանել վերը նշված պայմանավորվածությունների իրականացման, անհրաժեշտության դեպքում չինական լավագույն փորձի տեղայնացման նպատակով կապեր հաստատելու ուղղությամբ:

Հայաստանի պատվիրակության մասնակիցների վերաբերյալ հրավիրող կողմի համակարգողը էլեկտրոնային նամակով երախտագիտություն է հայտնել ակտիվ մասնակցության համար:

Ստորագրություն, ամսաթիվ

Ռ.Գյուլզատյան

02.05.2025թ.